ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՎԱՀԱՆ ԽՈՐԵՆՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հովհաննես Թումանյանին նվիրված հրապարակումների շարքում իր ծավալով ու բովանդակությամբ աչքի է ընկնում մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ խմբակցության անդամ Վահան Խորենու «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածաշարը:

Խորենին համադրական մեթոդով վերլուծում ու արժևորում է Թումանյանի ստեղծագործությունը՝ բնորոշելով այն իբրև գյուղական աշխարհի բանաստեղծություն, հեղինակի սոցիալական իդեալը՝ խաղաղություն, իսկ հեղինակին համարում է ժողովրդական մեծ բանաստեղծ՝ հայ աշխատավոր մարդու ապրումների և իդեալների երգիչ: Հոդվածագիրն առանձին ենթագլուխներով անդրադառնում է Թումանյանի սոցիալ-աշխատավորական և հայրենասիրական թեմաներով գրված ստեղծագործություններին, ընդգծում դրանցում արտացոլված բնապաշտական և հումանիստական համամարդկային իդեալները:

Բանալի բառեր՝ *Հովհաննես Թումանյան, Վահան Խորենի, գյուղական աշխարհ, հայրենասիրություն, խաղաղություն, մարդասիրություն, սոցիալ-քաղաքական մոտիվներ, ժողովրդական մեծ բանաստեղծ:*

1919 թ. փետրվար-մարտ ամիսներին մեծ շուքով ու համաժողովրդական խանդավառությամբ նշվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Այսօր հարյուրամյա հեռավորությունից պետք է արձանագրել, որ դեռևս բանաստեղծի կենդանության օրոք ժողովրդի հավաքական գիտակցությունը լիովին հասու էր նրա՝ ի վերուստ սահմանված առաքելության խորհրդին: Դա որոշակիորեն տեսանելի է հատկապես մամուլի հրապարակումներում, որտեղ հոբելյանական հպանցիկ գնահատականների կողքին հանդիպում են նաև ծավալուն ուսումնասիրություններ, ուր փորձեր են արվում ներկայացնելու բանաստեղծի ստեղծագործական աշխարհը՝ բազմակողմանի փաստարկված վերլուծություններով:

Հոդվածներից յուրաքանչյուրում բանաստեղծի ստեղծագործական աշխարհը բացվում է հոդվածագրի սեփական դիտակետից՝ հաճախ երևան հանելով այնպիսի շերտեր, որոնք սովորաբար տեսանելի են լինում որոշակի պատմական հեռավորությունից:

Այս կարգի հրապարակումների շարքում իր ընդգրկումով ու բովանդակային տարողությամբ առանձնանում է Վ. Խորենու (Վահան Տեր-Գևորգյան)՝ «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածաշարը, որ բանաստեղծի ստեղծագործության մի ամբողջական ուսումնասիրություն է[1]: Շրջանցելով պատճառ-

1 Ուշագրավ է, որ Վահան Տեր-Գևորգյանը 1919 թ. մարտի 15-ին Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված գրական երեկույթին հանդես է գալիս զեկուցմամբ՝ «Հովհ. Թումանյանի բանաստեղծության հասարակական և փիլիսոփայական տարերքը» թեմայով: Ներկայացնում է իր «Գյուղական աշխարհի երգիչը» հոդվածի համառոտ շարադրանքը:

ները՝ նկատենք, որ հոդվածը շատ քիչ է արժանացել ուշադրության և մնացել է դաշնակցական մամուլի էջերում:

Գաղտնիք չէ, որ Վահան Խորենին եղել է ժամանակի հայտնի մտավորականներից, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: Իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է ազգային խնդիրների լուծմանը՝ նախաձեռնելով Հայաստանում պետական և հասարակական կյանքի ազգայնացման ծրագիրն ու գործը: Խմբագրել է «Աշխատավոր» (Թիֆլիս), «Հայաստանի աշխատավոր» (Երևան) թերթերը, մի շարք հոդվածներով հանդես եկել «Գեղարվեստի», «Նոր հոսանքի», «Արևի», «Հորիզոնի», «Հառաջի» էջերում: Իր հեղինակած նյութերում Վահան Խորենին մշտապես աչքի է ընկել մտքի ճկունությամբ, ընտրած նյութի բարձր իմացությամբ և այն վերլուծելու և գնահատելու վարպետությամբ:

Այսպիսով, Հովհ. Թումանյանի հոբելյանական հրապարակումների մեջ խորությամբ ու ծավալով առանձնանում է Վ. Խորենու վերոհիշյալ հոդվածը:

Սկզբում հեղինակը ներկայացնում է իր ուսումնասիրության մեթոդն ու հարցադրումների տրամաբանությունը, որ հանգում է հետևյալին. «Գրական երկերի քննադատությունը օբյեկտիվ ու գիտական լինելու համար պետք է ոչ միայն ենթակայիկ (սուբյեկտիվ) կամ այսպես կոչված՝ պսիխոգենետիկ, այլև սոցիալ-գենետիկ մեթոդով կատարվի: Միմիայն այսպիսի քննադատությունը կարող է գիտական լինել և ամբողջական ու ճիշտ պատկեր տալ ստեղծագործողի ու նրա ստեղծագործության մասին»[1]:

Այս «միացյալ՝ սինկրետիկ մեթոդով» էլ Խորենին վերլուծում ու արժևորում է Թումանյանի ստեղծագործությունը, որ բնորոշում է իբրև «գյուղական աշխատավորական աշխարհի բանաստեղծություն», հեղինակի սոցիալական իդեալը՝ խաղաղություն, իսկ իրեն՝ հեղինակին հայտարարում «ժողովրդական մեծ բանաստեղծ»՝ հայ աշխատավոր գյուղացիության կյանքի, բնական և սոցիալ-հոգեկան միջավայրի, նրա ապրումների ու իդեալների երգիչ, որ լի է անհատական հույզերով, վշտերով, տենչանքներով և փիլիսոփայական խոհերով:

Ապա առաջադրում է իր ելակետային կանխադրույթը. «Կարճ. նրա բանաստեղծությունը ինտելիգենտ գյուղացու բանաստեղծություն է: Նա այնպես է դիտում, սիրում ու պատկերացնում բնությունը, այնպես է հասկանում ու սիրում մարդուն, այնպես է սիրում կինն ու կյանքը, որպես **մտքով**[2] ինտելիգենտը, բայց **հոգով** ու բնությամբ գյուղացին»[3]:

Խորենին, մատնանշելով մի քանի ստեղծագործություններ («Գութանի երգը», «Գիքորը», «Չարի վերջը», «Ուժը», «Սասունցի Դավիթը», «Մի կաթիլ մեղրը»), ընդգծում է բանաստեղծի ոչ միայն պատկերակերտման վարպետությունն ու գեղարվեստական ինտուիցիան, այլև հատկապես այն կարևոր դրույթը, որ բոլոր մարդիկ հավասար են և ունեն ազատ ապրելու և աշխատելու իրավունքներ: Աշխատավոր գյուղացու սոցիալական կյանքի ու հոգեբանության խորագիտակ բանաստեղծը «անհավասարության սկզբունքին հակադրում է հավասարության սկզբունքը և կռվի գաղափարին՝ խաղաղության, սիրո ու եղբայրության գաղափարը»[4]:

1 «Հառաջ», թիվ 32, Թիֆլիս, 1919:
2 Հոդվածում բոլոր թավատառ բառերը ընդգծել է Վահան Խորենին:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում:

Առանձին ենթագլխում անդրադառնալով Թումանյանի «սոցիալ-աշխատավորական մոտիվներին»՝ կանգ է առնում հատկապես «Հառաչանք» պոեմի վրա, որ դիտում է իբրև հայ գրականության բացառիկ էջերից: Այն աշխատավոր գյուղացիության սոցիալական ծանր կյանքի տխուր հառաչանքների պարզ արտահայտությունն է, որտեղ բանաստեղծը ծերուկ գյուղացու միջոցով բացում է քաղաքական և սոցիալական նոր հարաբերությունների պատճառով ստեղծված կյանքի ողբերգական կողմերի իրական պատկերները: Հանգամանալից վերապատմումով՝ հաճախակի վերլուծական ու մեկնաբանական միջամտություններով, ներկայացնում է պոեմի սյուժեն, դեպքերի ու դեմքերի առկա պատկերը, որ հենց ստեղծագործող հեղինակի բուն նպատակն է: Բայց շարադրանքի ամբողջ ընթացքում բացահայտ կամ ենթատեքստում գործում է քննադատի «սոցիալ-գենետիկ» հայեցակերպը, որ հեղինակի հղացումները իմաստավորում է նոր քաղաքական իրականության դիտակետից: Այսպես, օրինակ, ներկայացնելով պոեմի այն դրվագը, որտեղ ծերունին տրտնջում է իրենց հոգսաշատ կյանքից, մեկնաբանում է. «Ահա ձեզ պրոլետար գյուղացիության սոցիալ-տնտեսական կատարյալ ու տխուր պատկերը»[1]: Մի այլ տեղ, վկայակոչելով ծերունու խոսքերը, թե՝ «Ո՛չ ամոթ ունի ուժեղը, ո՛չ վախ, Վայը եկել է տարել տկարին», համանման սոցիալական բովանդակություն է վերագրում Փարվանա դստեր խոսքերին՝ «տկար լավի» և «վես տմարդիի» հակադրության մասին:

Խորենին պոեմի վերապատմումով և համապատասխան հղումներով շարունակում է մանրամասն քննել յուրաքանչյուր քայլափոխի կեղեքվող գյուղացու ողբերգությունը: Ծերունու այն խոսքերը, թե ինքը չի հասկանում, թե «ո՞վ է մեղավոր», մեկնաբանում է այսպես. «Ծայր դեմոկրատական և նույնիսկ հեղափոխական մտքերը, որ նա արտահայտում է դրանից հետո, կասկած չեն թողնում, որ նման կարգերն ու բարքերը հեղափոխականացնում են անգամ ութսունամյա ծերունուն և ըմբոստացնում նման անիրավ ու անարդար կարգերի դեմ»[2]: Խորենին պարբերաբար ընդգծում է Թումանյանի՝ չքավոր գյուղացու սոցիալ-տնտեսական ծանր կացությունը նկարագրելու վարպետությունը: «Չոբան Չատու» պատմությունն արտացոլում է ժամանակի վարքն ու բարքը, ընդգծում ազատասեր և արդարամիտ գյուղացու ընդվզումը ստի ու կեղծիքի դեմ, նրա պատվախնդրությունը՝ ապացուցելով, սակայն, թե որքան անպաշտպան ու իրավազուրկ են Չատին ու նրա նմանները: Ներկայացնելով չոբան Չատիի պատմությունը՝ Խորենին դրանից հետևեցնում է. «Երբեք մեր բանաստեղծության մեջ սոցիալ-աշխատավորական մոտիվները ավելի ուժեղ ու ավելի որոշ չեն հնչվել: Հայ աշխատավոր գյուղացին սոցիալական հավասարության այնպիսի պարզ ու հստակ գիտակցություն է երևան բերում այս պոեմի մեջ, որ անգամ հայ քաղաքական-կուսակցական մամուլը չէ դրսևորել... Մարդկանց ազատության ու սոցիալական հավասարության և արդարության ու ճշմարտության ավելի գեղեցիկ ու գեղարվեստական պատկերացումն, քան «Հառաչանքն» է, մեր գրականությունը չունի»[3]:

«Հառաչանքը» պոեմի սոցիալական պատկերին ի լրում է դիտվում «Երկա-

1 «Աշխատավոր», թիվ 48, Թիֆլիս, 1919:
2 «Աշխատավոր», թիվ 49, 1919:
3 Նույն տեղում:

թուղու շինությունը» պատմվածքը: Խորենին դարձյալ ընդգծում է Թումանյանի տաղանդը՝ փոքր ծավալի մեջ հերոսներից յուրաքանչյուրի հոգեբանության բացահայտման տեսանկյունից: Նոր տնտեսակարգի, փողի իշխանությանը զուգընթաց աստիճանաբար փոփոխվում են նաև գյուղացիների մտածելակերպը, դատողությունները:

Խորենին, իհարկե, ինչպես տեղ-տեղ զգացվում է հոդվածի հաջորդ ենթագլուխներում, չի շրջանցում այն մարդկային-բարոյական ու բնական բարձր արժեքները, որ դիտում ու կենդանագրում է Թումանյանն իր երգերում: Բայց նա, ինչպես իր կուսակից ընկեր-քննադատները, միշտ առաջին պլան են մղում այն միտքը, թե մեծ բանաստեղծի ստեղծագործությունը հատուկ արժեք է ներկայացնում նաև նոր գաղափարախոսության չափանիշներով: Այս տեսակետից հետաքրքիր է, օրինակ, հայտնի «Գութանի երգի» նրա մեկնաբանությունը. «Ահա ձեր առաջ ամբողջ հոգեկան և տնտեսական պատկերով այն աշխատավորը, որը իր սոցիալական դրությամբ տարբերվում է պրոլետարիատից նրանով, որ նրա աշխատանքը շահագործվում է, հենց Մարքսի խոսքով, ոչ միայն ուղղակի կերպով շահագործող արդյունաբերական կապիտալից, այլև անուղղակի կերպով՝ և՛ վաշխառուական (պարտք) և՛ հողատիրական (կոռ ու բեգեառ), և՛ պետական ֆինանսական կապիտալից (իբրև «թովջի» հարկ)»[1]:

Քննադատի դիտարկմամբ «Սասունցի Դավիթ» պոեմը ևս «արդի գյուղացիության վիճակն է պատկերացնում», այսինքն՝ «նախապես ազնվական-նախարարական» վեպը Թումանյանի մշակմամբ դարձել է «էապես գյուղացիական-ժողովրդական» և ցույց է տալիս, որ «մեր գյուղացիության կացությունը միջնադարից դեսը շատ քիչ է փոխվել»: Հիշում է այն դրվագը, երբ Դավիթը, քննադատի բնութագրմամբ՝ «իր ավատական նախարարական քմահաճույքոտ մարզանքների ու որսի ժամանակ կոխկռտել է» գյուղացու արտը, ապա բերում է արտատեր պառավի հանդիմանական խոսքերը՝ ուղղված Դավթին, և եզրակացնում. «Ավելի գեղեցիկ ու ավելի պարզ հազիվ թե հնար լինել արտահայտել ու պատկերավորել կիսաճորտական վիճակում ապրող և իր աշխատանքի արդյունքից զուրկ աշխատավոր գյուղացու հոգեբանությունը»[2]:

Խորենին Թումանյանի ստեղծագործության միասնական համատեքստում է քննում նաև նրա հայրենասիրական երգերը: Սկզբունքային տարբերություն տեսնելով Պատկանյանի՝ ազգայնական շեշտերով հնչող հայրենասիրության և Թումանյանի համադրական հայրենասիրության միջև՝ քննադատն անում է դիտողություններ, որոնք ելակետային նշանակություն են ունեցել հետագա շրջանի թումանյանագիտության համար: Հիմնական կանխադրույթն այն է, թե Թումանյանի հայրենասիրությունը տարբեր է պատկանյանական հայրենասիրությունից, որովհետև նա ժողովրդի ազգային-քաղաքական կացությունն անբաժան է դիտում սոցիալականից, նրա հայրենասիրությունը մեկ ամբողջություն է կազմում բնապաշտական և հումանիստական համամարդկային իդեալների հետ: Եվ այս ամենը բանաստեղծի երգերում արտահայտվում է իբրև խորապես զգացված անձնական-քնարական ապրում. «Անհնարին է լինում նրա մոտ արտաքին սոցիալականը տարբերել ներքին ենթակայականից: Եվ սրա մեջ է Թումանյանի բանաստեղծական տաղանդի ինքնօրինակությունը: Նա

1 «Հառաջ», թիվ 32, 1919:
2 Նույն տեղում:

ամեն ինչ, նաև հայրենիքի բնության սերը, նրա «հազարավոր ցավերը», նրա տառապանքը ապրում է **բանաստեղծորեն**, ապրում է նուրբ, ապրում է համամարդկային մտքով ու վեհ զգացմունքով, բնականորեն, անխառն, էսթետիկական համակումով և համակրումով, զերծ ամեն տեսակի արտաքին, որպեական, պաշտոնական նկատումներից, շարժառիթներից կամ թելադրանքներից: Նա իր հայրենիքը սիրում է ոչ թե «որովհետև» կա «նրա համար» և ոչ թե որևէ նեղ ազգայնական կամ ուռա-պատրիոտիստական մոտիվներից: Ո՛չ»[1]:

Հոդվածագիրն իր դիտարկումները հաստատելու համար վերլուծում է «Նախերգանքը»՝ նկատելով, որ Թումանյանի հայրենասիրությունը մի բնական զգացմունք է դեպի հայրենի, հարազատ բնությունը, ժողովուրդը: «Եթե կուզեք դա հայրենասիրություն չէ,- գրում է քննադատը,- այլ հայրենական **բնասիրություն** կամ բնապաշտություն ու ժողովրդասիրություն է: Այդպիսի հայրենասիրությունից հեռու է նախ ամեն տեսակ նեղ ազգայնականությունը և ապա՝ դա անբաժան է իրական ժողովրդասիրությունից ու իսկական մարդասիրությունից: Մի մաքուր, մի վեհ հումանիստական գեղապաշտ, բնապաշտ ու մարդապաշտ շունչ ունի այդ հայրենասիրությունը, և **այդ է հայ աշխատավոր ու այդ իսկ խաղաղասեր ժողովրդի իսկական հայրենասիրությունը**»[2]:

Մատնացույց անելով «Նախերգանքում» դրսևորված հայրենասիրության նրբերանգները՝ նկատում է, որ բանաստեղծի հոգու անհատակ վիշտն ու հայրենիքի խորունկ ցավերը խառնվում են «մի հոգեպարար, մի հաշտարար վսեմ համազգացումի մեջ... որի համակիր ներապրումի մեջ ի մի են ձուլվում անհատական ծանրաթախիծ ես-ն իր ապրումներով և հարվածված կամ «զարկված ու զրկված» հայրենիքը իր «հազարավոր ցավերով»»[3]:

Իհարկե, Խորենին այստեղ ևս չի մոռանում իր կանխադիր «սոցիալ-գենետիկ» մեթոդի տրամաբանությունը, որի համաձայն՝ այդպիսին կարող է լինել միայն «աշխատավոր ու այդ իսկ պատճառով խաղաղասեր ժողովրդի իսկական հայրենասիրությունը» կամ «իսկական ու ճշմարիտ դեմոկրատիկ» հայրենասիրությունը: Դա ժամանակի պարտադիր հարկն էր քննադատի որդեգրած նոր գաղափարախոսությանը: Էականն ու մնայունն այն ռացիոնալ ներդրումն է, որ դրանից անկախ ժամանակին կատարել են նա և իր գաղափարակից քննադատները նոր ձևավորվող թումանյանագիտության մեջ:

Խորենին առաջ է քաշում մի դրույթ ևս. Թումանյանի ժողովրդական-քաղաքացիական երգերը մարդասիրական և խաղաղասիրական բարձր շունչ ունեն. «Հարազատ ժողովրդի ու հայրենիքի ազատության երգը ներշունչ ու տոգորուն է ժողովուրդների եղբայրության ու համերաշխության վսեմ զգացմունքով: Ու այս հումանիստորեն ներշունչ և միջազգայնորեն տոգորուն՝ իսկական ու ճշմարիտ- դեմոկրատիկ հայրենասիրությունը բնականաբար իր ներքին հոգեբանական ու տրամաբանական հետևողականությամբ հասնում է փիլիսոփայական ընդհանրացման- տիեզերական հայրենազգացման...»[4]:

Բանաստեղծը, հեռավոր անհունի ոլորտներում ապրելով և մտովի տիեզերական անհայտի գաղտնիքը որոնելով, մշտապես իր հայրենիքի, ժողովրդի

1 «Աշխատավոր», թիվ 77, 1919:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:
4 «Աշխատավոր», թիվ 80, 1919:

կողքին է, նրա տառապանքների բաժանարարը: Խորենին տիեզերական և երկրային հայրենիքի անքակտելի առնչության ակնհայտ ապացույց է համարում «Վայրէջքը», որ 40-ամյա բանաստեղծի «հոգեկան ինքնահաշվետվության պերճախոս արտահայտություն» է: Այն ինքնօրինակ կերպով լրացնում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծության միտքը: «Նրանք ևս միանգամայն մեկին ու անկասկած են դարձնում, որ Անհունի ու հայրենիքի կարոտները կամ «հոգու պայծառ աշխարհքի» և հայրենի աշխարհի տենչանքները նախ՝ «մանուկ օրերից» կամ «վաղուց» հարազատ ու հիմնական ապրումներ են բանաստեղծին և ապա՝ դրանք համընթաց են իրար և ոչ տարընթաց...»[1]:

Քննադատը հայրենասիրություն - ժողովրդասիրություն – մարդասիրություն եռամիասնության հոգեբանական համադրման գեղեցիկ արտահայտություններից է համարում «Հայոց վիշտը» և «Մեր նախորդներին» ստեղծագործությունները: Բանաստեղծի տառապող հոգին նորից դեպի հարազատ ժողովրդի վշտի ծովն է դառնում և նրա «անհատակ խորքերի» մեջ սուզվում. հայոց վիշտը ամբողջ հայության «կյանքի ու մահվան ողբերգությունն է, որ համակում է ամբողջովին նրա հոգեկից ու հարազատ անդամին»[2]: Հոգեմիության անքակտելի կապի արտահայտություն է նաև «Մեր նախորդներին» բանաստեղծությունը: Խորենին ընդգծում է այն տողերը, որոնք արտացոլում են բանաստեղծի մտորումների ամենաողբերգական երանգները. «Հայրենիքի ազատության երազի խորտակումը համազոր է անհատական կյանքի ու հույսերի խորտակման: Բանաստեղծը այնքան ուժգին է ապրում հայրենի ժողովրդի մեծ վիշտը, որ մոռանում և ուրանում է «և՛ երգ, և՛ Աստված»»[3]: Աստծո դեմ ըմբոստացման երանգներ տեսնելով՝ քննադատն անցում է կատարում «Տրտմության Սողմոսներին»՝ «Ինչո՞ւ, Աստվա՛ծ» հարցադրումը որակելով իբրև Աստծո դեմ ուղղված սպառնալիք: Իրականում այն հնչում է իբրև փրկության միակ հույսին ուղղված աղերսանք:

Նկատենք՝ այստեղ ավարտվում է հոդվածաշարը՝ շարունակելի նշումով: Սակայն, ցավոք, մեր որոնումները՝ գտնելու ուսումնասիրության ավարտը, այդպես էլ հաջողություն չունեցան: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ պահպանված հատվածները, թեև որոշակիորեն կրում են գաղափարական միտվածություն, սակայն բավական վարպետորեն բացահայտում են Թումանյանի ստեղծագործական աշխարհը բնութագրող կարևոր ներբերանգներ ու հայեցակետեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է դառնալ ուսումնասիրության առանձին նյութ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հառաջ», թիվ 32, Թիֆլիս, 1919:
2. «Աշխատավոր», թիվ 48, Թիֆլիս, 1919:
3. «Աշխատավոր», թիվ 49, 1919:
4. «Աշխատավոր», թիվ 77, 1919:
5. «Աշխատավոր», թիվ 80, 1919:

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:

ОВАНЕС ТУМАНЯН ПО ОЦЕНКЕ ВАГАНА ХОРЕНИ - ЕВА МНАЦАКАНЯН - В ряде публикаций, посвященных Ованесу Туманяну, своим охватом и емкостью содержания отличается серия статей педагога, общественно-политического деятеля, члена фракции АРФД, Вагана Хорени «Певец сельского мира», которая является одним полноценным исследованием творчества поэта.

Хорени сравнительным методом анализирует и оценивает творчество Туманяна, которое характеризуется как поэзия сельского мира, социальный идеал автора – мир, а его самого – автора, объявляет великим народным поэтом – певцом жизни, естественной и социально-психической среды, переживаний и идеалов армянского рабочего крестьянства, который полон личными эмоциями, печалью, желаниями и философскими мыслями. Автор статьи отдельными подглавами рассматривает произведения Туманяна, написанные на социально-трудовые и патриотические темы.

Основной предпосылкой является то, что Туманян национально-политическое состояние рассматривает в неотделимости от социального, его патриотизм также составляет одну целостность с натуралистическими гуманистическими общечеловеческими идеалами. И все это в песнях поэта воспроизводится как глубоко чувственное личное-лирическое переживание.

Ключевые слова: Ованес Туманян, Ваган Хорени, сельский мир, патриотизм, мир, гуманизм, социально-политические мотивы, великий народный поэт.

HOVHANNES IN THE APPRIASALS OF VAHAN KHORENI - EVA MNATSAKANYAN - The collection of articles ‘‘The singer of village world´´ by Vahan Khoreni, a politician, community and political activist, and pedagogue, stands apart with its volume and content among the publications devoted to H. Toumanyan It is one of the complete studies done by the poet.

Using a comparative method, Khoreni analyses and evaluates the works by Toumanyan, which is described as the poet of village world. The social ideal of the poet is peace. He declares Toumanyan is a great national poet, a singer of village life, and ideal of its inhabitants, natural and social psychological environment, who is full of its emotions, ideals, private excitements, sorrows, desires and philosophical thoughts. The author of the article addresses Toumanyan´s social and patriotic works with separate subheadings.

The basic thesis is that Toumanyan highlights the national- political state of the nation as inseparable from the social state. His patriotism is a union with the admiration of nature and patriotic ideals. And all this is expressed in the poet´s works as a deeply felt personal –lyrical excitement.

Key words: Hovhannes Toumanyan, Vahan Khoreni, village world, patriotism, peace, humanity, social-political motives, great national poet.